ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

# Հայաստանի Հանրապետության 2017թ. խոշորացվող համայնքների նկարագրություն

# ԱԽՈՒՐՅԱՆ

## համայնք

## (Ախուրյան, Այգաբաց, Արևիկ, Բասեն, Կամո, Կառնուտ, Հովիտ և Ջրառատ բնակավայրեր)

Հեղինակ՝ Սարգիս Թովմասյան

Երևան – 2017

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Ախուրյան խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվում է 8 գյուղ՝ Ախուրյան (համայնքի կենտրոն), Այգաբաց, Արևիկ, Բասեն, Կամո, Կառնուտ, Հովիտ և Ջրառատ:

Համայնքի կազմավորումը նպատակ ունի հանրապետության ամենախոշոր գյուղը՝ Ախուրյանը դարձնել տարաբնակեցման համակարգի նոր տեղային կենտրոն՝ նպաստելով տարածքների համաչափ զարգացմանը և ապահովելով հանրային ծառայությունների հասանելիությունը համայնքի կազմում ընդգրկվող գյուղերի բնակիչների համար:

Համայնքում բնակչությունը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 18661 մարդ, վարչական տարածքը կազմում է 19687 հա:

**Փնջի ընդհանուր նկարագիրը**

Համայնքի կազմում ընդգրկվող 4 գյուղ (Ախուրյան, Արևիկ, Բասեն, Կառնուտ) տեղաբաշխված է Շիրակի դաշտի արևելյան գոտում, 4-ը (Այգաբաց, Կամո, Հովիտ և Ջրառատ)՝ Փամբակի լեռնաշղթայի արևմտյան լանջերի ստորին հատվածներում:

Բնական լանդշաֆտներում գերիշխում են սևահողային լեռնատափաստանները:

Կլիման բարեխառն կամ ցուրտ լեռնային է՝ ձմռան մինչև 5-6 ամիս տևողությամբ և հաստատուն ձնածածկույթով: Տարեկան նվազագույն տեղումները Արևիկում են (200-250մմ), առավելագույնը՝ Ջրառատում (600-900մմ): Ձմեռային ջերմաստիճանները տատանվում են -8-38c աստճանի միջակայքում, ամառայինները՝ 16-28c աստիճանի միջակայքում:

Բնակչության զբաղվածության հիմնական ուղղություններն են երկրագործությունն ու անասնապահությունը, մասնավորապես, հացահատիկային, բանջարաբոստանային և կերային կուլտուրաների մշակումը: Որոշակի տարածում ունեն թռչնաբուծությունն ու մեղվաբուծությունը:

Հովիտ գյուղի շրջակայքում կան բազալտի, տուֆի, պեմզայի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն:

Ախուրյանում կան մի շարք արտադրական ձեռնարկություններ, ինչպես նաև ոչ միայն համայնքի, այլև տարածաշրջանային կենտրոնին բնորոշ ենթակառուցվածքներ՝ անշարժ գույքի կադաստրի, ոստիկանության, սոցիալական ապահովության, նոտարական և այլ ծառայություններ, ինչը երաշխիքներ է ստեղծում՝ նոր կազմավորվող համայնքի բնակչությանը հանրային ծառայություններն ամբողջական ու պատշաճ մակարդակով ապահովելու համար:

Համայնքի կազմի մեջ մտնող գյուղերում առանձնապես կարևորվում են գյուղամիջյան ճանապարհների և խմելու ջրագծերի նորոգման, գազաֆիկացման, դպրոցական գույքի արդիականացման և գյուղատնտեսական արտադրանքի իրացման խնդիրները:

***Համայնքի փվյալների համադրում «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգով» սահմանված՝ խոշոր համայնքի փեսլականի պայմանների և խոշորացման չափորոշիչների հետ***

*<u>1. Տեսլականով սահմանված՝ բավարար մարդկային ռեսուրսների պայման և խոշորացման չափորոշիչներից՝ առնվազն 3000 բնակիչ ունեցող համայնքի կենտրոնի առկայություն.</u>*

Համայնքի կազմում ընդգրկվող գյուղերից բնակչության նվազագույն քանակ ունի Հովիտը(585), առավելագույն քանակ՝ Ախուրյանը (9664): Վերջինս նույնիսկ գերազանցում է հանրապետության մի շարք քաղաքների բնակչության թվին:

Բնակչության շարժընթացը նույնպես դրական պատկեր է ներկայացնում հանրապետության ժողովրդագրական ցուցանիշների համեմատությամբ, և 2001-2016թ.թ. բնակչության աճը համայնքի կազմում ընդգրկվող գյուղերում կազմել է 103 տոկոս (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ախուրյան խոշորացվող համայնքի բնակչության շարժընթացը և խտությունը

| | Համայնք (բնակավայր) | Վարչական տարածքը /հա/ | Հաշվառված բնակչություն | | բնակչ.փոփոխութ. Տոկոս | Բնակչության խտություն/մարդ/քառ.կմ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 2001թ. | 2016թ. | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Ախուրյան | 2702 | 9696 | 9664 | 100 | 358 |
| 2 | Այգաբաց | 1857 | 757 | 804 | 106 | 43 |
| 3 | Արևիկ | 1581 | 1749 | 1852 | 106 | 117 |
| 4 | Բասեն | 3681 | 1744 | 1775 | 102 | 48 |
| 5 | Կամո | 2418 | 1519 | 1510 | 99 | 62 |
| 6 | Կառնուտ | 1936 | 992 | 1199 | 121 | 62 |
| 7 | Հովիտ | 1642 | 538 | 585 | 109 | 36 |
| 8 | Ջրառատ | 3870 | 1147 | 1272 | 111 | 33 |
| | Ընդամ./միջինը | 19687 | 18142 | 18661 | 103 | 95 |

Բնակչության խտության ցուցանիշները ևս բարենպաստ են և մոտ են հանրապետության միջին ցուցանիշին:

*<u>2. Տեսլականով սահմանված՝ բավարար բնական ռեսուրսներով ապահովված լինելու պայման</u>*

Մասնավոր և համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հողերի միջինացված ցուցանիշը փոքր-ինչ ավելին է հանրապետական միջին ցուցանիշից (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Գյուղատնտեսական, հատուկ պահպանվող տարածքների, անտառային և արդյունաբերական նշանակության հողերը Ախուրյան խոշորացվող համայնքում

| | Համայնք | Հաշվառված բնակչություն 2016 | Գյուղատնտեսական հողեր: Քաղաքացիների սեփականություն | Գյուղատնտեսական հողեր: Համայնքի սեփականություն | Գյուղատնտեսական հողեր: Պետական սեփականություն | 1 բնակչի հաշվով: Քաղաքացիների սեփականություն | 1 բնակչի հաշվով: Համայնքի սեփականություն | 1 բնակչի հաշվով: Ընդամենը | 1 բնակչի հաշվով: պետական սեփականություն | Հատուկ պահպանվող տարածքներ | Անտառային | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ նշանակության |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 1 | Ախուրյան | 9682 | 1181,5 | 891,6 | 38,8 | 0,12 | 0,09 | 0,21 | 0,00 | 10,3 | 0,0 | 79,2 |
| 2 | Այգաբաց | 810 | 819,4 | 832,7 | 0,0 | 1,01 | 1,03 | 2,04 | 0,00 | 7,8 | 0,0 | 14,8 |
| 3 | Արևիկ | 1860 | 888,4 | 382,3 | 0,0 | 0,48 | 0,21 | 0,68 | 0,00 | 3,1 | 0,0 | 28,5 |
| 4 | Բասեն | 1787 | 1440,2 | 1596,2 | 899,1 | 0,81 | 0,89 | 1,70 | 0,50 | 123,2 | 245,9 | 75,0 |
| 5 | Կամո | 1505 | 828,3 | 1272,0 | 0,0 | 0,55 | 0,85 | 1,40 | 0,00 | 35,1 | 92,5 | 22,2 |
| 6 | Կառնուտ | 1085 | 555,1 | 1072,3 | 0,0 | 0,51 | 0,99 | 1,50 | 0,00 | 40,9 | 92,5 | 28,3 |
| 7 | Հովիտ | 586 | 359,6 | 888,5 | 0,0 | 0,61 | 1,52 | 2,13 | 0,00 | 38,1 | 145,4 | 23,3 |
| 8 | Ջրառատ | 1214 | 1197,2 | 2347,1 | 1743,8 | 0,99 | 1,93 | 2,92 | 1,44 | 97,7 | 0,0 | 21,9 |
| | Ընդամ./միջինը | 18529 | 7269,7 | 9282,7 | 2681,6 | 0,39 | 0,50 | 0,89 | 0,14 | 356,1 | 576,3 | 293,2 |

Համայնքի կազմում կան նաև 2681,6 հեկտար պետական սեփականության հողեր (հիմնականում արոտներ), որոնք գրեթե ամբողջությամբ նախկին Բասեն և Ջրառատ համայնքներում են:

Արտադրական նշանակության հողերի ամենամեծ ծավալները (մոտ 80հա) բնականաբար Ախուրյանում են: Բասենում ևս դրանք զգալի ծավալ են կազմում՝ 75 հա: Ընդերքօգտագործման (քարի արդյունահանում) շոշափելի հնարավորություններ կան Հովիտ գյուղի շրջակայքում:

*<u>3. Համայնքների խոշորացման փեսլականով սահմանված՝ բավարար ֆինանսական ռեսուրսներ ունենալու պայման</u>*

Խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվող նախկին համայնքներից սեփական եկամուտները մեկ բնակչի հաշվով հանրապետության միջին ցուցանիշից բարձր են եղել միայն Այգաբացում (7,6 հազար դրամ) և Կառնուտում (9 հազար դրամ), իսկ մնացած գյուղերում այն կազմել է 3,6-6,4 հազար դրամ, ինչի արդյունքում համայնքի ընդհանուր ցուցանիշը նույնպես պակաս է հանրապետության միջին ցուցանիշից (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Սեփական եկամուտների ծավալները Ախուրյան համայնքում

| | Համայնք | Հաշվառված բնակչություն 2016 թ. | Սեփական եկամուտ | |
|---|---|---|---|---|
| | | | 2013-2015թ.թ. տարեկան միջին /հազ.դրամ | 1 բնակչի հաշվով |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Ախուրյան | 9664 | 60947 | 6,3 |
| 2 | Այգաբաց | 804 | 6138 | 7,6 |
| 3 | Արևիկ | 1852 | 10293 | 5,6 |
| 4 | Բասեն | 1775 | 6428 | 3,6 |
| 5 | Կամո | 1510 | 9726 | 6,4 |
| 6 | Կառնուտ | 1199 | 10838 | 9,0 |
| 7 | Հովիտ | 585 | 2279 | 3,9 |
| 8 | Ջրառատ | 1272 | 7938 | 6,2 |
| | Ընդամ./միջինը | 18661 | 114586 | 6,1 |

Նկատի ունենալով համայնքային բյուջեների կազմում սեփական եկամուտների աղբյուրների շրջանակը՝ կարելի է ենթադրել, որ տարածաշրջանում հողային ռեսուրսների կառավարման և օգտագործման ոլորտներում ապահովված չէ պատշաճ մակարդակ:

*4. Բնակավայրերի և համայնքի կենտրոնի միջև տրանսպորտային կապերը և ավտոմոբիլային ճանապարհների վիճակը*

Աղյուսակ 4-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ Ախուրյան համայնքի կազմում ընդգրկվող գյուղերից 4-ը գտնվում են համայնքի կենտրոնից բարենպաստ հասանելիության տիրույթում, 3-ը՝ սահմանափակ բարենպաստության, ինչը դրական գործոն է: Այսուհանդերձ, Այգաբաց, Արևիկ, Կամո և Կառնուտ գյուղերը համայնքի կենտրոնին կապող ավտոճանապարհները հիմնանորոգման կարիք ունեն:

Աղյուսակ 4. Տրանսպորտային կապերի և ավտոճանապարհների վիճակը Ախուրյան համայնքում

| | Համայնք /բնակավայր/ | Բարձրությունը ծովի մակերևույթից | Հեռավորությունը համ.կենտրոնից | | Հասանելիությունը | Ճանապարհի վիճակի |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կմ | րոպե | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ախուրյան[1] | 1544 | 6,4 | 12 | | Բավարար |
| 2 | Այգաբաց | 1600 | 9,6 | 20 | Սահմ.բարեն. | Հիմնանորոգ.կարիք |
| 3 | Արևիկ | 1500 | 5,1 | 13 | Բարենպաստ | Հիմնանորոգ.կարիք |
| 4 | Բասեն | 1625 | 9,1 | 11 | Բարենպաստ | Բավարար |
| 5 | Կամո | 1700 | 9 | 19 | Սահմ.բարեն. | Հիմնանորոգ.կարիք |
| 6 | Կառնուտ | 1570 | 4,9 | 7 | Բարենպաստ | Հիմնանորոգ.կարիք |
| 7 | Հովիտ | 1670 | 9 | 11 | Բարենպաստ | Բավարար |
| 8 | Ջրառատ | 1900 | 13,2 | 16 | Սահմ.բարեն. | Բավարար |

*5. Կրթական, առողջապահության և մշակութային ենթակառուցվածքներ*

Խոշորացվող համայնքում առողջապահական հիմնարկների թիվը բավարար է, քանի որ բոլոր գյուղերում կան բուժկետեր, իսկ Ախուրյանում կա նաև պոլիկլինիկա (որն ունի հիմնանորոգման կարիք), ինչպես նաև 2 հիվանդանոց՝ 15 մահճակալով և 27 մահճակալով, որոնցից առաջինը հիմնանորոգման կարիք ունի, իսկ երկրորդի վիճակը բավարար է (Աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Առողջապահական հաստատությունները Ախուրյան համայնքում

| | Համայնք /բնակավայր/ | Բուժկետ | | Պոլիկլինիկա | | Հիվանդանոց | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | քանակ | վիճակ | քանակ | վիճակ | քանակ | մահճ. | վիճակ |
| 1 | Ախուրյան | 1 | Հիմնանոր. | 1 | Հիմնանոր. | 2 | 15 | Հիմնանոր. |
| | | | | | | | 27 | Բավարար |
| 2 | Այգաբաց | 1 | Բավարար | 0 | | 0 | | |
| 3 | Արևիկ | 1 | Հիմնանոր. | 0 | | 0 | | |
| 4 | Բասեն | 1 | Բավարար | 0 | | 0 | | |
| 5 | Կամո | 1 | Հիմնանոր. | 0 | | 0 | | |
| 6 | Կառնուտ | 1 | Ընթաց.նոր. | 0 | | 0 | | |
| 7 | Հովիտ | 1 | Ընթաց.նոր. | 0 | | 0 | | |
| 8 | Ջրառատ | 1 | Հիմնանոր. | 0 | | 0 | | |

Ախուրյանն ունի 3 մանկապարտեզ (2-ը՝ 100 տեղանոց, նույնքան փաստացի երեխաներով և բավարար վիճակով, 1-ը՝ 80 տեղանոց, 60 երեխաներով, ունի ընթացիկ նորոգման կարիք): Մանկապարտեզներ կան նաև Արևիկ (70 տեղանոց, 45 երեխաներով, ունի հիմնանորոգման կարիք), Բասեն (110 տեղանոց, 60 երեխաներով, բավարար վիճակում) գյուղերում, ինչպես նաև Այգաբացում, որը դեռևս չի շահագործվում:

Հանրակրթական դպրոցների առկայության և դրանց վիճակի վերաբերյալ տվյալները ներկայացված են 6-րդ աղյուսակում և ցույց են տալիս, որ դրանց քանակը բավարար է: Այսուհանդերձ, դպրոցների մեծ մասը (այդ թվում՝ Ախուրյանում գտնվող 3 հիմնական դպրոցները) ընթացիկ նորոգման կարիք ունեն:

[1] Համայնքի կենտրոնի պարագայում նշած է հեռավորությունը մարզկենտրոնից:

Աղյուսակ 6. Ախուրյան համայնքի հանրակրթական ուսումնական հաստատությունները

| | | Հիմնական դպրոց | | | Ավագ դպրոց | | | Միջնակարգ դպրոց | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | տեղ | Աշակ. | վիճակ | տեղ | Աշակ. | վիճակ | տեղ | Աշակ. | վիճակ |
| 1 | Ախուրյան | 470 | 376 | Ընթ.նոր. | 244 | 99 | Բավար. | | | |
| | | 300 | 338 | Ընթ.նոր. | | | | | | |
| | | 400 | 31 | Ընթ.նոր. | | | | | | |
| 2 | Այգաբաց | | | | | | | 100 | 95 | Ընթ.նոր. |
| 3 | Արևիկ | | | | | | | 300 | 200 | Ընթ.նոր. |
| 4 | Բասեն | | | | | | | 300 | 170 | Բավար. |
| 5 | Կամո | | | | | | | 200 | 145 | Ընթ.նոր. |
| 6 | Կառնուտ | | | | | | | 250 | 139 | Ընթ.նոր. |
| 7 | Հովիտ | | | | | | | 120 | 55 | Բավար. |
| 8 | Ջրառատ | | | | | | | 200 | 116 | Ընթ.նոր. |
| | Ընդամենը | 1170 | 745 | | 244 | 99 | | 1470 | 920 | |

Հիմնանորոգման կարիք ունեցող մշակույթի տներ կան Ախուրյանում (250 տեղ), Այգաբացում (300 տեղ) և Արևիկում, որը չի շահագործվում:

Ախուրյանն ունի նաև մարզադպրոց և 122 աշակետով արվեստի դպրոց, որն ընթացիկ նորոգման կարիք ունի:

Այսպիսով, Ախուրյան խոշորացվող համայնքն ունի կրթական և առողջապահական հաստատությունների բավարար քանակ, իսկ բուն Ախուրյանում մշակութային և արտադպրոցական օբյեկտների առկայությունը դրական գործոն է՝ համայնքի գյուղերի բնակչությանը համապատասխան ծառայությունների մատուցման համար:

Կրթական, մշակութային և առաղջապահական հաստատությունների տարածքային տեղաբաշխումը ներկայացված է ստորև բերված քարտեզի վրա:




Հապավումներ.-ԲԿ-Բուժկետ, Հ-Հիվանդանոց, ՄՊ-Մանկապարտեզ, ՀԴ-հիմնականդպրոց, ՄԴ-միջնակարգդպրոց, ԱԴ-Ավագդպրոց, ԱՐԴ-Արվեստիդպրոց, ՄՏ-Մշակույթիտուն

Ախուրյան համայնքի պարագայում համայնքների խոշորացման պայմանների և չափորոշիչների ամփոփ գնահատականը ներկայացված է 7-րդ աղյուսակում:

Աղյուսակ 7. Համայնքների խոշորացման պայմանների և չափորոշիչների ամփոփ գնահատականը Ախուրյան համայնքի համար

| | **Խոշորացման պայմաններ և չափորոշիչներ** | **Ցուցանիշի գնահատական** | **Ծանոթություն** |
|---|---|---|---|
| 1 | Բավարար մարդկային ռեսուրսներ և առնվազն 3000 բնակիչ ունեցող համայնքի կենտրոն | Բավարար է | |
| 2 | Բավարար բնական (հողային) ռեսուրսների առկայություն | Բավարար է | |
| 3 | Ֆինանսական ռեսուրսների առկայություն | Բավարար չէ՝ հանրապետության միջին ցուցանիշից պակաս է | |
| 4 | Տրանսպորտային կապեր | Բավարար է | |
| 5 | Ավտոճանապարհների վիճակ | Կարելի է պայմանականորեն բավարար համարել | Որոշ հատվածներում հիմնանորոգման կամ ընթացիկ նորոգման կարիք կա |
| 6 | Նախադպրոցական հիմնարկներ | Կարելի է բավարար համարել | |
| 7 | Կրթական հաստատություններ | Բավարար է | Դպրոցների մեծ մասն ընթացիկ նորոգման |

| | | | |
|---|---|---|---|
| | | | կարիք ունի |
| 8 | Առողջապահության օբյեկտներ | Բավարար է | Ընթացիկ կամ հիմնանորոգման կարիք ունեն |
| 9 | Մշակութային օբյեկտներ | Բավարար է | Ընթացիկ կամ հիմնանորոգման կարիք ունեն |
| 10 | Ընդհանուր սահմանի առկայություն | Առկա են | |
| 11 | Համայնքի կենտրոնի կենտրոնական դիրք | Բավարար է | |
| 12 | Բնակիչների համատեղելիություն և մենթալություն | Բավարար է | |

Այսպիսով, ընտրված 12 պայմաններից և չափանիշներից Ախուրյան խոշորացված համայնքը լիարժեքորեն բավարարում է 9-ին, մասնակիորեն՝ 2-ին:

Հիմնական շեղումը. սեփական եկամուտների միջինացված ցուցանիշը պակաս է հանրապետության գյուղական համայնքների համարժեք միջին ցուցանիշից,

*Ծանոթություն. Խոշոր համայնքի տեսլականով սահմանված՝ բավարար ֆինանսական ռեսուրսներ ունենալու պայմանը սոսկ տեսականորեն է կիրարկելի, քանի որ հանրապետությունում չկա ոչ մի ինքնաբավ համայնք, միաժամանակ, 1 բնակչի հաշվով սեփական եկամուտների միջինացված ցուցանիշը ևս (7300 դրամ) գործնականում չի կարելի բավարար համարել:*

Որպես մասնակի շեղումներ կարելի է դիտարկել հետևյալ ոլորտները՝

- 4 գյուղերի ճանապարհները հիմնանորոգման կարիք ունեն,
- Որոշ գյուղերում մանկապարտեզների բացակայությունը, ինչը գործնականում բնորոշ է գյուղական բնակավայրերի մեծ մասին:

***Որպես առկա շեղումները չեզոքացնելու հիմնական ուղղություններ պետք է դիտարկել՝***

- Միջբնակավայրային ավտոմոբիլային ճանապարհների, ինչպես նաև կրթական, առողջապահական և մշակութային հաստատությունների ընթացիկ և հիմնանորոգման աշխատանքների իրականացումը:
- Հողային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացումը:

Միաժամանակ, նոր ձևավորվող համայնքում ենթակառուցվածքների արդյունավետ տեղաբաշխման և տարածքային զարգացման համալիր լուծումներ ապահովելու նպատակով ցանկալի է Ախուրյան համայնքի համար մշակել դրա տարածքային զարգացման նախագիծը:

***Ախուրյան համայնքի կազմավորումը կարող է ապահովել համայնքների խոշորացման հայեցակարգում ամրագրված հետևյալ հիմնական արդյունքները՝***

1. Մարդկային ռեսուրսների համախմբումը, ինչը թույլ կտա բարձրացնել համայնքի կառավարման արդյունավետությունը (որակյալ կադրեր, ընդլայնված կառավարման օբյեկտ, և այլն),

2. Ենթակառուցվածքների համախմբումը և ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացումը, ինչը թույլ կտա կենտրոնացնել փոշիացած ռեսուրսները և դրանց կառավարումն իրականացնել մեկ կենտրոնից, մշակել և իրականացնել համայնքային քաղաքականություն, որը փոքր համայնքներից շատերում բացակայում է,

3. Միավոր ծառայության վրա կատարվող ծախսերի նվազեցումը և ծառայությունների շրջանակի ընդլայնումը,

4. Ենթակառուցվածքների գծով կապիտալ ներդրման գումարների առավել նպատակային և կենտրոնացված օգտագործումը,

5. Համապետական ծրագրերի իրականացման հնարավորությունների մեծացումը,

6. Տնտեսության ճյուղերի՝ հատկապես գյուղատնտեսության զարգացման համար ավելի մեծ հնարավորությունների ստեղծումը,

7. Բնական պաշարների հասանելիությունը և դրանցից օգտվելու հնարավորության ապահովումը գործնականում բոլոր բնակավայրերի բնակիչների համար:

Վերը թվարկվածից զատ, որպես Ախուրյան համայնքի կազմավորման լրացուցիչ արդյունքներ պետք է դիտարկել՝

- ՀՀ Շիրակի մարզում տարաբնակեցման համակարգի նոր տեղային (զարգացման) լիարժեք կենտրոնի ձևավորումը, ինչը տարածքների համաչափ զարգացման առաջնային գրավականն է,
- հանրային ծառայությունների հասանելիության ապահովումը համայնքի կազմում գտնվող գյուղերի բնակիչների համար:

Սույն զեկույցը լույս է տեսնում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Հրատարակության մեջ առկա տեսակետների պատասխանատվությունը կրում են հեղինակները և չեն արտացոլում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, ՇԶՀԳ և ԱՄՆ ՄԶԳ-ի և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

**Հրապարակված է**

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (ԳՄՀԸ) կողմից
Ընկերության գլխամասային գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

**ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր**

Բաղրամյան պող. 4/1, 0019, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 (0) 10 58 05 39; 58 93 00
Ֆաքս՝ +374 (0) 10 58 92 70
Կայք՝ www.giz.de